ԿԱՐԾԻՔ

Ամալյա Գագիկի Սաֆարյանի «Հավաքների ազատության սահմանադրական հիմքերի իրացման արդի հարցադրումները» ԺԲ.00.02 «Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ամալյա Գագիկի Սաֆարյանի «Հավաքների ազատության սահմանադրական հիմքերի իրացման արդի հարցադրումները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հավաքների ազատության էության, սոցիալական և իրավաքաղաքական նշանակության բացահայտմանը, հավաքների առանձին տեսակների անհրաժեշտության վերլուծությանը, հավաքների ազատության իրավունքի իրացման, ինչպես նաև դրա սահմանափակման սահմանադրաիրավական հիմնխանդիրներին: Հեղինակն աշխատանքի առանձին գլխում հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման համատեքստում քննարկել է նաև այդ իրավունքի իրացման հարցում իրավական մշակույթի դերը:

Հայաստանի Հանրապետությունում հավաքների ազատության իրացման ոլորտի հասարակական հարաբերությունների ներկայիս զարգացումների համատեքստում հեղինակի կողմից քննարկված և վերլուծության ենթարկված հիմնախնդիրները չափազանց արդիական են և ունեն գիտագործնական հետազոտության մեծ պահանջարկ: Հիմնավոր են հեղինակի՝ թեմայի արդիականությանը և խնդրո առարկա հարցադրումների հրատապությանը վերաբերող փաստարկները:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական զարգացման ողջ ընթացքում թե՛ իրավական կարգավորման, թե՛ գործնական հարթություններում առկա են եղել լուրջ խնդիրներ հավաքների ազատության իրավունքի արդյունավետ կարգավորման և իրացման ոլորտում: Հեղինակի առաջ քաշած հարցադրումների՝ տեսական վերլուծության

վրա հիմնված ամբողջական և համակարգային պատասխանները կօգնեն լուծելու այս ոլորտում առկա մի շարք խնդիրներ:

Հեղինակին հաջողվել է քննարկվող հիմնահարցերի վերաբերյալ ներկայացնել ինքնուրույն, հիմնավորված դատողություններ, գիտականորեն հիմնավորված հետևություններ, ինչպես նաև ՀՀ իրավական համակարգում ներառված մի շարք նորմատիվ իրավական ակտերի և (կամ) դրանց առանձին դրույթների կատարելագործման կապակցությամբ օբյեկտիվորեն արդարացված և անհրաժեշտ գործնական առաջարկություններ:

Ատենախոսությունում ներկայացված դատողություններն ու եզրահանգումներն ունեն գիտագործնական զգալի նշանակություն և կարող են օգտակար լինել ինչպես առանձին հետազոտությունների, այնպես էլ հայրենական օրենսդրության բարեփոխման համար:

Ամալյա Գագիկի Սաֆարյանի թեկնածուական ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք. այն կազմված է ներածությունից, երեք գլխից, յոթ պարագրաֆից, եզրակացությունից, հավելվածներից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակն անդրադարձել է հավաքների ազատության տեսահրավական հիմքերին, բացահայտել է դրանց սոցիալական և իրավաքաղաքական նշանակությունը, ինչպես նաև վերլուծել է հավաքների առանձին տեսակների անհրաժեշտությունը և իրավական հիմքերը:

Աշխատանքի երկրորդ գլխում հեղինակն անդրադարձել է հավաքների ազատության իրացման սահմանադրահրավական հիմնախնդիրներին, մասնավորապես՝ այդ ազատության իրացման կառուցակարգերին և դրա սահմանափակման հիմքերին և սահմաններին:

Աշխատանքի երրորդ գլխում հեղինակն անդրադարձել է հավաքների ազատության իրավունքի ապահովման գործընթացքում ոստիկանության դերին և քննարկել է հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացման համատեքստում իրավական մշակույթին առնչվող հիմնախնդիրները:

Որպես աշխատանքի ձեռքբերում կարելի է համարել նաև հետևյալ իրողությունները.

- Աշխատանքը շարադրված է պարզ և ընկալելի լեզվով, ինչը վկայում է քննարկվող հիմնախնդիրներին լիարժեք իրազեկվածության, թեմայի վերաբերյալ սեփական դատողությունները մատչելի շարադրելու հեղինակի կարողության մասին:
- Աշխատանքի պաշտպանության ներկայացվող դրույթներում հեղինակը զերծ է մնացել զուտ միայն իրավակարգավորման կատարելագործման առաջարկություններ ներկայացնելուց և աշխատանքի այդ հատվածում ներառել է այն տեսական ընդհանրացումները, որոնք ապագայում կարող են հիմք հանդիսանալ կոնկրետ իրավական կարգավորման նախագծեր մշակելիս: Աշխատանքում պաշտպանության ներկայացվող դրույթները հստակ տարանջատված են եզրակացություններից: Նման պայմաններում հեղինակը զերծ է մնացել աշխատանքի այս երկու հատվածների անհարկի կրկնությունից:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով ատենախոսությունը՝ դրա առնչությամբ, այնուամենայնիվ, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել հետևյալ դիտողությունները.

1) Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը, որը ձևակերպված է բարդ շարադրանքով: Չթերագնահատելով հեղինակի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ հեղինակի կողմից այդ դրույթի բովանդակության որոշակիորեն պարզեցված ներկայացնելը հնարավորություն կտա առավել ընկալելի դարձնել այն:

2) Պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթով հեղինակն առաջարկում է հանրային հավաքի անցկացման մասին իրազեկման քննարկումների ընթացքում ոստիկանության և ազգային անվտանգության մարմիններին չսահմանափակել միայն իրազեկման մեջ արտացոլված հնարավոր վտանգների կամ առնվազն խոչընդոտների

շրջանակով, այլ վերջիններիս համար սահմանել պարտականություն հավուր պատշաճի բացահայտելու դրանց իրական շրջանակները և ողջամտության սահմաններում հրապարակայնացնելու բացասական դիրքորոշման իրենց հիմնավորումները: Մեր կարծիքով այս դրույթը, արժեքավոր լինելու հետ մեկտեղ, կարիք ուներ առավել մանրամասն անդրադարձի աշխատանքի բուն տեքստում, մասնավորապես՝ բացասական դիրքորոշման հիմնավորումները հրապարակայնացնելու «ողջամտության սահմանների» բացահայտման առումով:

3) Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթը, որով հեղինակն առաջարկում է *հավաքների ազատության իրավունքի արդյունավետության ապահովման տեսանկյունից քաղաքական չեզոքության ցուցաբերման և առանց համազգեստի հավաքների մասնակցելու հետ կապված իրավական անորոշության խնդիրը լուծել համարժեք ու համալիր իրավական կարգավորումների միջոցով՝ երաշխավորելով հանրային ծառայության սահմանափակումների և անձի քաղաքական իրավունքների խելամիտ ներդաշնակեցման հիմնախնդիրը:* Մեր կարծիքով, նշված խնդիրը լուծելու համատեքստում հեղինակի կողմից ներկայացված իրավական կարգավորումները աշխատանքի բուն տեքստում լրացուցիչ հիմնավորման կարիք ունեին:

Այնուամենայնիվ՝ ներկայացված դիտողությունները հիմնականում կրում են բանավիճային բնույթ և չեն նվազեցնում հետազոտության գիտական արժեքը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է փաստել, որ գրախոսվող ատենախոսությունը պատրաստված է գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսությունը պատրաստված և կազմված է ատենախոսության ձևավորման պահանջներին համապատասխան: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Ամալյա Գագիկի Սաֆարյանի «Հավաքների ազատության սահմանադրական հիմքերի իրացման արդի հարցադրումները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է

«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Հեղինակը ցուցաբերել է գիտահետազոտական-վերլուծական զգալի ընդունակություններ, կատարել է բազմակողմանի հետազոտություն, ներկայացրել է պատշաճ մակարդակով գրված, տեսական և գործնական զգալի նշանակություն ունեցող աշխատանք, որի համար ատենախոսության հեղինակը կարող է արժանանալ ԺԲ.00.02-«Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում)» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական հայցվող աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ ***Ս. ԲԱԴԱԼՅԱՆ***

23 սեպտեմբերի, 2024 թվական

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սայադ Բադալյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ ***Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ***

24 սեպտեմբերի, 2024 թվական